վանաց էր բուռկուրաթոռ տրօքման տի Ֆրանչա միւսին Ստէֆանօ Ռուսպոլի, որ յոյժ բարեպաշտ անձ էր և սա. և մեծ բարեկամութիւնս արար Թովմաճանին, զի սորա գրովն զկնի եօթն աւուրց ելեալ գնաց ի Ռէշիթ Թովմաճանն ի սպիցեօն բաթերայից՝ որոց մեծաւորն էր բատրէ Կայթանօ տի Միլլա բռէֆիտէնդի, ընդ որ ի յերուսաղէմ բարեկամութիւն մեծ ունէր, որ ընդ նմա գնացեալ էր ի Նազարէթ։ Եւ աւուրս 20 նստաւ մինչեւ անցոյց զպարանս իւր յեգիպտոս առանց մաքսի։

1763 — Եւ ապա ելի ի Ռէշիտէն Թովմաճանն որդւովն 1763 Յունվարի մէկին և 5ին եհաս ի յեգիպտոս։ Արդ ի յեգիպտոս ի Տառպիճինին ի տան Յարութիւնի իշեւանեցաւ Թովմաճանն Պօղոս որդւով և մի սպասաւորաւ...։

Այլ արդ՝ իբրեւ ետես Թովմաճանն թէ յետ կալոյ զամիս 8 ի յեգիպտոս ոչ յաջողեցաւ առեւտրոյ վաճառն, այլ եւս աստացեալ էր երկիւղի հրամանն Օսման աղային. և եւս աղօթիւք և ողորմութեամբ Տն. բացորոշեաց գնալ ի Ճիտտէ[1], և եթէ անդ եւս ոչ յաջողեսցի գնալ ի Հնտստան։

Եւ ի Ճիտտէ մին անուանի հայոց ազգէ Քանտիացի հոճա Եանաքի իբր կէս յոյն, նմա մին յանձնարարական գիրս առնու Թովմաճանն, և Շալճրօղլու խոճա Աբրահամն Կ. Պոլսեցի որ էր ի յեգիպտոս յայնժամ և կամէր գնալ ի Ճիտտէ, և երբ լուաւ թէ Թովմաճանն եւս գնալոց է, եկն առ նա և ընկերացան և ելին յեգիպտոսէ կարաւանաւ 1763 Սեպտ. 19ին, և 21ին հասին ի Սուվէիշ[2]. և նստան զաւուրս 23, որ յոյժ վատ և անջուր տեղի ինչ է. և զջուրն գնել պարտի որպէս զշէրպէթ։

Արդ ի Սուվէիշ գնացեալ Թովմաճանն եգիտ զՍիւլէյման շառայպի նաւապետն ընդ որում ի յեգիպտոսէ բարեկամացեալ էր և խօսեցան զվարձ նաւուն 25 ըռեալ վասն միոյ փոքրիկ դամարայի. և առեալ զնամակ չորից անձանց, այսինքն Թովմաճանի և որդւոյն Պօղոսի, և Շալճի օղլու հոճա Աբրահամի և միոյ սպասաւոր Երեմիայի։ Պատրաստեցան և մտին ի նաւն Հոկտեմբերի 16ին ելին ի Սուվէիշէ 8 նաւք միասին և բնաւքն էին յոյժ բեռնաւորեալք մինչեւ յետ ընլոյ զնէրքին խորշս նաւին և զքոռիտոռն, այլեւս դիզեալ էին եւս յեզերս նաւին մարդաչափ բարձրութեամբ, և յետ երկուց աւուրց հասին ի Թուրիսինայ և ելին արտաքս, որք բերէին ի Թուրիսինա լեառնէ պատուական մրգեղէնս և տանձս զորս գնէին բազումք, զի վասն ոչ գտանելոյ այնոցիկ ի Ճիտտէ մի մի փարա գնէին զհատն տանձին։ Եւ յետ երից աւուրց ելին անտի և մտին յեռկինն, և զմեծ ալեկոծութիւնս կրեցին. և ընկերացեալ 8 նաւքն կորուսին զմիմեանս։ Իսկ նաւն Թովմաճանին հանդերձ միով ընկերաւ հազիւ կարացին ըմբռնել յետ 6 աւուրս զՀասան առասին։ Իսկ բռնութիւն ալեկոծութեան շուարեալ զնոսա արկեալ էր զերկաթն ի վերայ շապքարի միոյ 15 գրկաչափ խորութեամբ. իսկ այլ կողմանքն խոր անդունդ էր յորս ոչ կարէր ձգել զայլ երկաթս։ Վասն որոյ նաւապետն իւր նաւավարօք և ուխտաւոր մահմետական հաճիովք որք էին 250 հոգիք, առ հասարակ ողբալով զՏէր Աստուած յօգնութիւն խնդրէին, նմանապէս և Թովմաճանն իւրայնովքն։ Վասն զի եթէ խզէր առասան նաւին՝ անկանէր ի ցամաք. և հազարաւոր ֆէլլահքն տեղւոյն եկեալ սպասէին խզման առասանի նաւին, որպէս զի յափշտակեսցեն զապրանսն և զմարդիկ նաւին սպանցեն։ Բայց բարեբարն Աստուած ունկնդիր եղեւ աղաչանաց նոցին ի մէջ գիշերոյ յանկարծակի հնչեաց հողմն ի ցամաքէ, որով ֆելլահք վախճանազուրկ եղեն, և նաւավարք սկսան քարշել զերկաթն ուրախութեամբ։

Եւ այժմ զայս զարմանալիս նկատեսցուք, որք այսքան անձինք սկսան քարշել զերկաթն՝ ոչ գայր ի վեր. և իշեալ լուղորդն ետես զի մի թև երկաթոյն մտեալ է ի մէջ այնր շապ քարին, և առասան սոցին յայս բռնութենէն ոչ խզեցաւ. վասն

1. Հէճազի (Արաբիա) ծովային քաղաք։
2. Եգիպտոսի անապատին ծայրը դէպ ի կարմիր ծով։